

Հավելված N1  
Հայաստանի Հանրապետության  
պետական եկամուտների կոմիտեի նախագահի  
2020 թվականի ապրիլի 17-ի  
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
Հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի 14-05-2021 թ. որոշմամբ  
«ՄԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»  
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին**

<b>1. Հիմնադրամի՝</b>		
1.1 Լրիվ անվանումը	ՄԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱԶԱՓՆՅԱԿ ԱԶԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ ՀԱԼԱԲՅԱՆ 16	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01143	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2009-10-14	
1.5 ՀՎՀՀ-ն	01245672	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10398413	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.tumo.org	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@tumo.org	
<b>2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝</b>		
Սամվել Սայմըն Սիմոնյան		
<b>3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝</b>		
<b>4. Կառավարչի անուն, ազգանուն՝</b>		
Մարի Լու Փափազյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	256	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
<b>8. Ֆինանսավորման աղբյուրները՝</b>		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Ստեփանակերտ)	60292400
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Ստեփանակերտ, ք.Դիլիջան)	30000000
	Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (Կողբ համայնք)	248155473

	Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Ստեփանակերտ, ք.Գյումրի և ք.Երևան)	1249702875
	Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո կենտրոնի ստեղծում	124379779
	Թումոն Տուփի մեջ	14411099
	ԵՄ ԹՈՒՄՈ Ինժինեբական և կիրառական Գիտությունների համալիր	803902284
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակ	219200
<b>9. Հիմնադրի ներդրումը՝</b>		
9.1 Դրամական միջոցներ		0
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
<b>10. Նվիրատվություններ/ նվիրաբերությունները</b>		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	0	0
10.1.3 Ֆիզիկական անձինք		
<b>11. Իրականացված ծրագրերը՝</b>		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ԵՄ ԹՈՒՄՈ Ինժինեբական և կիրառական Գիտությունների համալիր	222254842	
Հաջորդ սերունդ. Հակա-կոռուպցիոն խաղ և մուլտիֆիլմ ծրագիր	26104877	
Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Գյումրի)	336089448	
Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Ստեփանակերտ)	290883044	
Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի և հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման ծրագիր	936058435	
Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Դիլիջան)	94226315	
Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո կենտրոնի ստեղծում	122244645	
Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերակառուցման, վերանորոգման և պահպանման ծրագիր	196774853	
Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր ԿԲ հետ համատեղ (ք.Դիլիջան)	208473529	

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագիր (ք.Ստեփանակերտ, ք.Դիլիջան, ք.Գյումրի և ք.Երևան)	2888288101
Թումո ստուդիաներ	292348422
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	5944364731
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	5613746511

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 45 թերթից:  
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն \_\_\_\_\_  
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_  
ստորագրությունը, անունը, ազգանունը

**Համախմբված ֆինանսական  
հաշվետվություններ  
Անկախ աուդիտորի եզրակացություն  
«Սիմոնյան կրթական հիմնադրամ»**

31 դեկտեմբերի 2019թ.



# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
«Սիմոնյան կրթական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկ	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Եկամուտների և ծախսերի մասին համախմբված հաշվետվություն	9
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	11
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

## Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**  
Երևան Պլազա բիզնես կենտրոն  
ՀՀ, ք. Երևան 0015  
Գրիգոր Լուսավորչի 9  
Հ. + 374 10 50 09 64/61

**Grant Thornton CJSC**  
Yerevan Plaza Business Center  
9 Grigor Lusavorich Street,  
Yerevan 0015, Republic of Armenia  
T + 374 10 50 09 64/61

«Սիմոնյան կրթական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամներին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սիմոնյան կրթական հիմնադրամի» (Մայր ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի» (ՀԷՄՍԽ կանոնագիր) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Արմեն Հովհաննիսյան  
Տնօրեն



Լիլիթ Արաբաջյան, FCCA  
Առաջադրանքի պատասխանատու

20 մայիսի 2021թ.



# «Սիմոնյան կրթական հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկ

Սամվել Սայմըն Սիմոնյան - խորհրդի նախագահ

Սևան Նատաշա Սիմոնյան - խորհրդի անդամ

Սիլվա Օհանյան Սիմոնյան - խորհրդի անդամ

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	3,955,810	2,988,726
Ոչ նյութական ակտիվներ	5	24,625	32,430
Հետաձգված հարկային ակտիվներ		5,425	-
Ոչ ընթացիկ ակտիվների համար կանխավճարներ		917	4,832
Տրամադրված փոխառություններ	6	37,788	-
		<u>4,024,565</u>	<u>3,025,988</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	300,132	279,920
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	127,076	302,170
Տրամադրված փոխառություն	6	1,584	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	622,858	825,143
		<u>1,051,650</u>	<u>1,407,233</u>
Ընդամենը ակտիվներ		<u>5,076,215</u>	<u>4,433,221</u>

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Պարտավորություններ և զուտ ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր և փոխառություններ	10	90,357	108,275
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	3,937,456	3,753,054
		<u>4,027,813</u>	<u>3,861,329</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Բանկային վարկեր և փոխառություններ	10	15,901	15,282
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	197,249	134,844
Եկամուտներին վերաբերող շնորհներ	13	158,968	269,363
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		7,670	2,644
		<u>379,788</u>	<u>422,133</u>
<i>Զուտ ակտիվներ</i>			
Կուտակված արդյունք		659,118	146,489
Մայր ընկերությանը վերագրելի ընդամենը զուտ ակտիվներ		659,118	146,489
		<u>9,496</u>	<u>3,270</u>
Զվերահսկվող բաժնեմաս		668,614	149,759
		<u>5,076,215</u>	<u>4,433,221</u>

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. մայիսի 20-ին:

Մարի Լու Փափազյան

Տնօրեն



Արամ Նարիմանյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Եկամուտների և ծախսերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Եկամուտ շնորհներից և նվիրատվություններից		2,457,357	1,756,108
Այլ հասույթներ	14	218,183	432,392
		<u>2,675,540</u>	<u>2,188,500</u>
Ծրագրային ծախսեր	15	(107,699)	(162,991)
Հատուցումներ աշխատակիցներին		(1,323,963)	(1,149,020)
Մաշվածություն և ամորտիզացիա		(188,173)	(201,535)
Այլ գործառնական ծախսեր	16	(502,495)	(513,232)
Գործառնական գործունեությունից շահույթ		<u>553,210</u>	<u>161,722</u>
Ֆինանսական ծախս	17	(28,304)	(6,807)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	18	(23,451)	(8,073)
Շահույթ մինչև հարկերը		<u>501,455</u>	<u>146,842</u>
Շահութահարկի գծով ծախս	19	(11,402)	(31,295)
Տարվա շահույթ շարունակվող գործառնություններից		<u>490,053</u>	<u>115,547</u>
Ընդհատված գործառնություններից տարվա օգուտ	20	28,802	-
Տարվա շահույթ		<u>518,855</u>	<u>115,547</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		<u>518,855</u>	<u>115,547</u>
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք վերագրելի՝			
Չվերահսկվող բաժնեմասին		(5,293)	14,645
Մայր ընկերությանը		524,148	100,902

Եկամուտների և ծախսերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	45,587	(11,375)	34,212
Տարվա շահույթ	100,902	14,645	115,547
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	100,902	14,645	115,547
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	146,489	3,270	149,759
Տարվա շահույթ	524,148	(5,293)	518,855
Դուստր ընկերության օտարում	(11,519)	11,519	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	512,629	6,226	518,855
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	659,118	9,496	668,614

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	518,855	115,547
<i>Ճշգրտումներ<sup>1</sup></i>		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	188,173	201,919
Ընդհատված գործառնություններին վերաբերող ակտիվներ	8,947	-
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	516
Ֆինանսական ծախս	28,304	6,807
Շահութահարկի գծով ծախս	11,402	31,295
Փոխարժեքային տարբերությունից վնաս	23,451	8,073
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>779,132</u>	<u>364,157</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	175,012	316,435
Պաշարների փոփոխություն	(20,212)	(78,398)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	59,650	(18,958)
Շնորհների փոփոխություն	74,007	917,079
Տրամադրված փոխառություններում փոփոխություն	(65,254)	500
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<u>1,002,335</u>	<u>1,500,815</u>
Վճարված տոկոս	(7,862)	(6,430)
Վճարված շահութահարկ	(11,801)	(36,575)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>982,672</u>	<u>1,457,310</u>

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,152,484)	(1,280,770)
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</i>	(1,152,484)	(1,280,270)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	34,175
Վարկերի և փոխառությունների մարում	(11,859)	(9,658)
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զույր դրամական միջոցներ</i>	(11,859)	24,517
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(181,671)	201,557
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(20,614)	(7,355)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	825,143	630,941
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	622,858	825,143

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սիմոնյան կրթական հիմնադրամը» («Մայր ընկերություն», դուստր ընկերությունների հետ միասին՝ «Խումբ») ստեղծվել է ամերիկահայ բարերարներ Սեմ և Սիլվա Սիմոնյանների կողմից (Հիմնադիր): Խումբը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 2009թ. հոկտեմբերի 14-ին:

Խումբը սկսել է իր գործունեությունը 2010թ.: Ներկայումս Խումբը շարունակում է իրականացնել հետևյալ հիմնական ծրագրերը՝ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների հիմնում և համապատասխան ծրագրերի իրականացում, Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու մասնակի վերանորոգում, զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման բարեգործական ծրագրի շրջանակներում: Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի բացումը տեղի է ունեցել 2011թ. օգոստոսի 14-ին, որը 12-18 տարեկան դեռահասներին անվճար դասընթացներ է մատուցում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, առանձին նպատակաուղղված դասընթացների միջոցով աջակցում է ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայնմանը կոնկրետ ուղղություններով:

Երևան համայնքի և Խմբի միջև 2014թ.-ի մայիսի 31-ին կնքված պայմանագրի համաձայն՝ Երևանի Հալաբյան փողոցի 16 հասցեում գտնվող Հ. Թումանյանի անվան զբոսայգու 15.62 հա տարածքը 99 տարի ժամկետով անհատույց օգտագործման է տրամադրվել Խմբին:

2015թ. մայիսի 25-ին և սեպտեմբերի 2-ին տեղի է ունեցել համապատասխանաբար Թումո Գյումրի և Ղարաբաղ կենտրոնների բացումը:

Խումբը Գյումրի քաղաքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով կատարում է հին թատրոնի շենքի և հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, որոնք մտադիր է ավարտել մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը:

Խումբը նախատեսում է մինչև 2020թ.-ի հոկտեմբերի 30-ը Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն բացել նաև Տավուշի մարզի Կողբ գյուղում: Ծրագիրը իրականացվում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն և Կողբ հիմնադրամի միջոցների հաշվին և ընդհանուր բյուջեն կազմում է 384,000 հազար դրամ:

Խումբը 2017թ. նախաձեռնել է իրականացնել «Թումո Ստուդիաներ» կրթական ծրագիրը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 5,000,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի հիմնական նպատակն է մի կողմից հրավիրելով աշխարհի տարբեր ծայրերում գտնվող դիզայներական մտքի և խոհարարական արվեստի առաջատար մասնագետներին, իսկ մյուս կողմից ծրագրին մասնակից դարձնելով ուսանողներին, ստեղծել մեկ ընդհանուր հարթակ, որտեղ նրանց համագործակցության արդյունքում կստեղծվեն արվեստի բարձրորակ արժեքներ, խոհարարական նրբահամ ճաշատեսակներ, որտեղ կձևավորվեն և կկրթվեն Հայաստանի ապագա արհեստավարժները: Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի, «Սեմ և Սիլվա Սիմոնյաններ» հիմնադրամի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, «Ջեյ Էյ Էմ» բարեգործական հիմնադրամի, ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հանգանակությունների և նվիրատվությունների հաշվին: Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը:

Թումո կրթական ծրագրի նկատմամբ աճող միջազգային հետաքրքրությամբ պայմանավորված Խումբը ներկայումս զբաղվում է կենտրոնների աշխարհագրական ընդլայնմամբ: 2018թ.-ին նոր կենտրոններ են բացվել Փարիզում և Լիբանանում: Խումբը պլանավորում է մոտ ապագայում նոր կենտրոններ հիմնել Մոսկվայում և Տիրանայում:

Մայր ընկերությունը 2017թ. ընթացքում հիմնադրել է «Թումո վենչուր» ՓԲԸ (80% բաժնեմաս), և ձեռք է բերել ևս 3 դուստր ընկերություններ՝ «Արդեան» ՍՊԸ (60% բաժնեմաս), «Խելագար Սաքո» ՍՊԸ (100% բաժնեմաս) և «Շունն ու կատուն» ՍՊԸ (100% բաժնեմաս):

2019թ. ընթացքում «Արդեան» ՍՊԸ-ի 60% բաժնեմասը օտարվել է Մայր ընկերության կողմից:

Համաձայն 2017թ. դեկտեմբերի 22-ին կնքված պայմանագրի՝ նպատակ ունենալով նպաստել «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնի ընդլայնմանը և զարգացմանը, ինչպես նաև Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնմանը, Խումբը Կենտրոնական բանկի հետ միասին իրականացնելու է «Թումո Դիվիզան» համատեղ ծրագիրը: Ծրագիրը իրականացնելու համար Կենտրոնական բանկը ներդնում է տարածքի օգտագործման գույքային կառավարման իրավունքը, կատարում է դրամային և գույքային ներդրում, իսկ Խումբը՝ ծրագրի իրականացման համար ձևավորված հմտությունները, փորձը, մասնագիտական և այլ գիտելիքները, ինչպես նաև ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ մնացած ծախսերի ֆինանսավորումը:

Հիմնադրամն իրականացնում է «ԵՄ-Թումո ինժեներական և կիրառական գիտությունների համալիր» նախագիծը: Ծրագրի իրականացման ժամկետը 57 ամիս է: Ծրագրի ընդհանուր բյուջեն 17,193,695 եվրո է:

ԵՄ Թումո ինժեներական և կիրառական գիտությունների համալիրը STEM (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) էկոհամակարգ է Երևանում:

Հանդիսանալով հանգույց հետազոտությունների, կրթության և ստարտափերի համար, որը նախատեսված է համալսարանական ուսանողների և երիտասարդ մասնագետների համար, համալիրի միջոցով տեղացի և միջազգային գործընկերները կամուրջ կստեղծեն Հայաստանում բարձրագույն կրթության և արդյունաբերության միջև:

Խմբի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Հալաբյան 16:

Խմբի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը 2019թ. կազմում է 260 մարդ (2018թ.՝ 207 մարդ):

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «*Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների*»:

## 2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով և որոշ պաշարների, որոնք հաշվառվում են զուտ իրացման արժեքներով:

## 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 22-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

**Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

**ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ»**

ՖՀՄՍ 16-ը «Վարձակալություններ» փոխարինում է ՀՀՄՍ 17-ը «Վարձակալություն», առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4

«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15

«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27

«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»):

Այս նոր ստանդարտի կիրառումը հանգեցրել է նրան, որ Խումբն իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով

ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք որոշակիացված են որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Խումբն ընտրել է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՍ 16-ը նախկինում ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Խումբը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս Խումբն օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՀՀՄՍ 8 (Փոփոխություններ) «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» - «Էականի» սահմանում

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխությունները՝ «Էականի» սահմանումը պարզաբանելու համար և հայեցակարգային հիմունքներում ներկայացված սահմանումը բուն ստանդարտներում ներկայացվածի հետ համապատասխանեցնելու համար:

ՀՀՄՍ 1-ում էականության վերաբերյալ պահանջները փոփոխվել են՝ շեշտադրելու համար այն փաստը, որ տեղեկատվությունը չպետք է խմբավորվի կամ ապախմբավորվի այնպիսի եղանակով, որը կթաքցնի էական տեղեկատվությունը: Փոփոխություններում նաև մատնանշվում է, որ էականությունը կիրառվում է ֆինանսական հաշվետվությունների բոլոր տարրերում՝ ներառյալ առաջնային ֆինանսական հաշվետվությունները, ծանոթագրությունները և հատուկ բացահայտումները, որոնք պահանջվում են առանձին ՖՀՄՍ-ներով: Փոփոխության նպատակն է խրախուսել ընկերություններին (և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերանայման գործընթացում ներգրավված այլ անձանց) ուշադիր մոտեցում ցուցաբերել

ներկայացման պահանջներին և այն տարրերին, որոնք պետք է ներառվեն ֆինանսական հաշվետվություններում:

Առաջնային հաշվետվությունների տողերի բովանդակությունը հստակեցվել է, պարզաբանելով, որ ինչպես կարիք կա ոչ էական տարրերը խմբավորել, այնպես էլ հնարավոր է, որ էական տարրեր պարունակող անհատական տողերը կարիք լինի ապախմբավորել:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

**ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» - պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ**

2020թ. հունվար ամսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» փոփոխությունները, որոնք հստակեցնում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու համար կիրառվող չափանիշները: Փոփոխությունները նախատեսված են պարտավորությունների դասակարգման հանդեպ ավելի ընդհանուր մոտեցում տրամադրելու համար՝ հիմք ընդունելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրային պայմանները:

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը հիմնվում է այն հանգամանքի վրա, թե արդյոք Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ իրավունք ունի՞ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով: Փոփոխությունները նաև պարզաբանում են, որ «մարել» եզրույթը ներառում է կանխիկի, ապրանքների, ծառայությունների կամ սեփական կապիտալի գործիքների փոխանցումը, եթե սեփական կապիտալի գործիքները փոխանցելու պարտավորությունը չի առաջանում փոխարկման հատկանիշից, որը բաղադրյալ ֆինանսական գործիքի պարտավորության բաղադրիչից առանձին է դասակարգված որպես սեփական կապիտալի գործիք:

Քանի որ այս փոփոխությունները գոյություն ունեցող պահանջները պարզաբանում, բայց չեն փոխում, չի ակնկալվում, որ դրանք նշանակալի ազդեցություն կունենան Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

**Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների փոփոխություններ**

Վերանայված հայեցակարգային հիմունքներում ներառված է չափման մասին նոր գլուխ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերաբերյալ ուղեցույց, կատարելագործված բնորոշումներ և ուղեցույցներ, մասնավորապես՝ պարտավորության սահմանումը, ինչպես նաև կարևոր բնագավառների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպիսիք են օրինակ՝ կառավարման, զգուշավորության և չափման վերաբերյալ անորոշության դերը ֆինանսական հաշվետվություններում:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

## 2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

2019թ. դեկտեմբերի 31

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Շունն ու կատուն» ՍՊԸ	100%	Հայաստան	2017թ. հունիսի 29	-	2017թ. հուլիսի 3
«Խելագար Սաքո» ՍՊԸ	100%	Հայաստան	2017թ. նոյեմբերի 24	-	2017թ. դեկտեմբերի 13
«Թումո վենչուրս» ՓԲԸ	80%	Հայաստան	2017թ. մարտի 24	Թումո կրթական ծրագրի ֆրանչայզինգի իրականացում	2017թ. օգոստոսի 21

2018թ. դեկտեմբերի 31

Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Արդեան» ՍՊԸ	60%	Հայաստան	2017թ. հունվարի 31	Ձեռագործ իրերի արտադրություն և վաճառք	2017թ. փետրվարի 17
«Շունն ու կատուն» ՍՊԸ	100%	Հայաստան	2017թ. հունիսի 29	-	2017թ. հուլիսի 3
«Խելագար Սաքո» ՍՊԸ	100%	Հայաստան	2017թ. նոյեմբերի 24	-	2017թ. դեկտեմբերի 13
«Թումո վենչուրս» ՓԲԸ	80%	Հայաստան	2017թ. մարտի 24	Թումո կրթական ծրագրի ֆրանչայզինգի իրականացում	2017թ. օգոստոսի 21

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

### 3.2 Համատեղ գործունեություն

Համատեղ գործունեությունը համատեղ պայմանավորվածություն է, համաձայն որի՝ պայմանավորվածության նկատմամբ համատեղ վերահսկողություն ունեցող կողմերը պայմանավորվածությանը վերաբերող ակտիվների նկատմամբ ունեն իրավունքներ, իսկ պարտավորությունների գծով՝ պարտականություններ: Այդպիսի կողմերը կոչվում են համատեղ գործողներ:

Խումբը համատեղ գործունեությունում իր մասնակցության հետ կապված, ճանաչում է.

- ա) իր ակտիվները՝ ներառյալ համատեղ պահվող ակտիվների իր բաժինը,
- բ) իր պարտավորությունները՝ ներառյալ համատեղ ստանձնած պարտավորությունների իր բաժինը,
- գ) համատեղ գործունեությունից ստացվող արտադրանքի իր բաժնի վաճառքից հասույթը,
- դ) համատեղ գործունեության արդյունքի վաճառքից հասույթի իր բաժինը,
- ե) իր ծախսերը՝ ներառյալ համատեղ կրած ծախսերի իր բաժինը:

Խումբը համատեղ գործունեությունում իր մասնակցությանը վերաբերող ակտիվները, պարտավորությունները, հասույթները և ծախսերը հաշվառում է այն ՖՀՄ-ներին համապատասխան, որոնք կիրառելի են այդ ակտիվների, պարտավորությունների, հասույթների և ծախսերի նկատմամբ:

### 3.3 Արտարժույթ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 553.65 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### 3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	- 30 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 3-5 տարի
Արտադրատնտեսական գույք	- 3-5 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

### 3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի և լիցենզիաների համար:

### 3.6 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց

այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեգրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեգրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեգրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

### 3.7 Վարձակալված ակտիվներ

*2019թ. հունվարի 1-ից սկսած կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն*

#### *Խումբը որպես վարձակալ*

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Խումբը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Խմբին,
- Խումբն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Խումբն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Խումբն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

#### *Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ*

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

#### *Խումբը որպես վարձատու*

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ՖՀՄՍ 16-ի համաձայն, համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:

Որպես վարձատու Խումբը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

*Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն*

*Խումբը որպես վարձակալ*

*Գործառնական վարձակալություն*

Բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

### 3.8 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.9 Ֆինանսական գործիքներ

*Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

### *Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

#### *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

#### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված փոխառությունները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

### *Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: \$ՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 24(բ)-ում:

### *Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

### *Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

### *Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## **3.10 Ծնորհներ**

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

### 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### 3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված

ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

### *Վճարովի բացակայություններ*

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

### *Պարզևավճարներ*

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

## 3.13 Եկամուտ շնորհներից և այլ նվիրատվություններից

Խմբի եկամուտները գոյանում են նվիրատվություններից, հանգանակություններից, ինչպես նաև շնորհներից:

Նվիրատվություններից և հանգանակություններից եկամուտը ճանաչվում է, երբ հավանական է, որ դրանք կստացվեն և եկամտի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնադրի կողմից հատկացվող միջոցները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դրանք դառնում են ստացման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ միջոցները տրամադրվում են որոշակի պայմաններով, այս դեպքում ստացված միջոցները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Հետաձգված եկամուտը ճանաչվում է պարբերական հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

## 3.14 Հասույթ

### *Հասույթ պայմանագրերից*

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Խմբի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթը ձևավորվում է հիմնականում այլ երկրներում Թումո ծրագրերի իրականացման աջակցումից, ֆրանչայզինգից, ճամբարի կազմակերպումից և սրճարանային գործունեությունից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները

- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ հսումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

### *Թումո ծրագրերի իրականացման աջակցումից հասույթ*

Թումո ծրագրերը ներառում են ծրագրային ապահովում, կրթական նյութեր, մանկավարժական մեթոդիկա և Թումո անվանումը, ինչպես նաև Թումո կենտրոնների բացման նախապատրաստական ծառայություններ, կառավարման, համակարգման աշխատանքներ: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են:

### *Ֆրանչայզինգից հասույթ*

Ֆրանչայզինգից հասույթը ճանաչվում է գծային հիմունքով համապատասխան ֆրանչայզինգի պայմանագրի ժամկետի ընթացքում:

### *Ճամբարի կազմակերպումից հասույթ*

Ճամբարի կազմակերպումից հասույթը ճանաչվում է, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են:

### *Վարձակալական հասույթ*

Վարձակալական հասույթը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալական հասույթը ճանարվում է յուրաքանչյուր ամսվա վերջում, երբ համապատասխան հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում:

## 3.15 Ընդհատված գործառնություններից շահույթ կամ վնաս

Ընդհատված գործառնությունը կազմակերպության բաղադրիչ մաս է, որը կամ օտարվել է, կամ դասակարգված է որպես վաճառքի համար պահվող, և՛

(ա) իրենից ներկայացնում է բիզնեսի (գործունեության) առանձին խոշոր ուղղություն կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածք,

(բ) կազմում է բիզնեսի առանձին խոշոր ուղղության կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածքի օտարման մեկ համակարգված պլանի մաս, կամ

(գ) բացառապես վերավաճառելու նպատակով ձեռք բերված դուստր կազմակերպություն է:

Ընդհատված գործառնություններից շահույթ կամ վնասը ներկայացված է մեկ տողով «ընդհատված գործառնություններից ստացված օգուտի կամ վնասի» վերնագրի ներքո եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Այս գումարը, որը ներառում է ընդհատված

գործառնությունների հետհարկային շահույթը կամ վնասը վերլուծված է ծանոթագրություն 20-ում:

## 4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հոդ և շենքեր	Մեքենաներ, սարքավորումներ, համակարգիչներ	Արտադրատնտեսական գույք	Անավարտ շինարարություն	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	958,817	986,987	414,010	656,598	3,016,412
Ավելացում	29,638	41,201	36,387	1,165,804	1,273,030
Օտարում	-	-	(600)	-	(600)
Ներքին շարժ	-	-	1,331	(1,331)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	988,455	1,028,188	449,797	1,822,402	4,288,842
Ավելացում	-	129,010	51,667	973,094	1,153,771
Ընդհատված գործառնությունների վերաբերող ակտիվներ	(7,003)	(1,641)	(2,912)	-	(11,556)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	981,452	1,155,557	498,552	2,795,496	5,431,057
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	120,273	676,310	311,181	-	1,107,764
Տարվա հաշվարկ	9,346	142,779	40,311	-	192,436
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(84)	-	(84)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	129,619	819,089	351,408	-	1,300,116
Տարվա հաշվարկ	8,405	135,363	34,662	-	178,430
Ընդհատված գործառնությունների վերաբերող ակտիվներ	(1,954)	(835)	(510)	-	(3,299)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	136,070	953,617	385,560	-	1,475,247
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	858,836	209,099	98,389	1,822,402	2,988,726
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	845,382	201,940	112,992	2,795,496	3,955,810

Ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,016,726 հազար դրամ (2018թ.՝ 898,971 հազար դրամ), որը հիմնականում իրենից ներկայացնում է ամբողջությամբ մաշված համակարգիչների սկզբնական արժեքը:

Խումբը 2015թ. նոյեմբերի 27-ին կնքված նվիրաբերության պայմանագրի շրջանակներում Գյումրի քաղաքում կրթական և մշակութային կենտրոն ստեղծելու պայմանով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից որպես նվիրաբերություն ստացել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շչորսի փող. 1 հասցեում գտնվող հուշարձան շենքը (հեռուստառադիոստուդիա)՝ 1,680 հազար դրամ կադաստրային արժեքով և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ՝ 0.184726 հեկտար հողամասը՝ 5,431 հազար դրամ կադաստրային արժեքով:

Անավարտ շինարարության ավելացումները ներառում են.

Հազար դրամ

	2019թ.	2018թ.
Գյումրու թատրոնի շենքի վերակառուցում	855,097	802,819
«Թումո» կենտրոնի կառուցում Կողբ համայնքում	116,675	316,367
«Թումո ստուդիաներ» ծրագրի շրջանակներում կառուցվող շենքի ճարտարապետական և նախագծման աշխատանքներ	-	46,618
Այլ	1,322	-
	<u>973,094</u>	<u>1,165,804</u>

## 5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Համակարգչային ծրագրեր և լիցեն- զիաներ
<i>Սկզբնական արժեք</i>	
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	83,346
Ավելացում	7,740
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	91,086
Ավելացում	2,628
Ընդհատված գործառնություններին վերաբերող ակտիվներ	(744)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>92,970</u>
<i>Կուտակված ամորտիզացիա</i>	
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	49,173
Տարվա հաշվարկ	9,483
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,656
Տարվա հաշվարկ	9,743
Ընդհատված գործառնություններին վերաբերող ակտիվներ	(54)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>68,345</u>
<i>Հաշվեկշռային արժեք</i>	
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,430
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>24,625</u>

Ոչ նյութական ակտիվների գերակշիռ մասն իրենից ներկայացնում է համակարգիչների համար ձեռք բերված ծրագրերը, որոնք օգտագործվում են Թումո ծրագրի շրջանակներում:

## 6 Տրամադրված փոխառություններ

Հազար դրամ	Երկարաժամ- կետ փոխառություն- ներ	Կարճաժամ- կետ փոխառություն- ներ
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տրամադրված փոխառություններ	80,045	1,584
Իրական արժեքի ճշգրտում	(21,815)	-
Պահուստ՝ հաշվարկված համաձայն ՖՀՄՍ 9-ին	(20,442)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>37,788</u>	<u>1,584</u>

Ոչ ընթացիկ անտոկոս փոխառությունները տրամադրվել են «Արդեան» ՍՊԸ-ին, որոնք ենթակա են մարման 2023թ.: Փոխառությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքին: Փոխառությունները տրամադրվել են հայկական դրամով:

## 7 Պաշարներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շինանյութեր	236,332	187,752
Ապրանքներ	13,895	52,397
Պահեստամասեր	3,674	1,937
Անավարտ արտադրանք	-	5,522
Այլ	46,231	32,312
	<u>300,132</u>	<u>279,920</u>

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	37,486	16,840
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(27,982)	-
	<u>9,504</u>	<u>16,840</u>
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	110,480	284,227
Կանխավճարված հարկեր	7,092	1,103
	<u>117,572</u>	<u>285,330</u>
	<u>127,076</u>	<u>302,170</u>

Կանխավճարները տրվել են Գյումրի քաղաքում և Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո ստեղծարար կենտրոնների կառուցման և վերակառուցման նպատակով:

Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստը վերաբերում է Mahara Capital-ի առաջին տարվա վարձավճարին՝ որպես սեփականության իրավունքի ասարտոնագրի, ծրագրի իրականացման և կենտրոնի ամենօրյա կառավարման փոխհատուցում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

24 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային դիսկի և ակնկալվող պարտքային դիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս ծանոթագրություն 24 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

## 9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	1,785	2,182
Բանկային հաշիվներ	621,073	822,961
	<u>622,858</u>	<u>825,143</u>

Տե՛ս ծանոթագրություն 24՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

## 10 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային վարկեր	12,851	12,136	90,357	102,835
Փոխառություններ	3,050	3,146	-	5,440
	<u>15,901</u>	<u>15,282</u>	<u>90,357</u>	<u>108,275</u>

### Վարկեր

Խուրը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ի հետ կնքել է վարկային միջոցների տրամադրման պայմանագրեր՝ 7.25% տարեկան տոկոսադրույքով, առավելագույնը համապատասխանաբար 300,000 հազար դրամ և 150,000 հազար դրամ գումարի չափով, որոնք համաձայն պայմանագրերի բանկերի կողմից կարող են տրամադրվել միանվագ կամ մաս մաս՝ պայմանագրերի գործողության ժամկետներում: Պայմանագրերը գործում են համապատասխանաբար մինչև 2032թ. դեկտեմբերի 22-ը և 2038թ. նոյեմբերի 29-ը:

## 11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	3,753,054	2,898,182
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	830,900	1,051,310
Տարվա ընթացքում ճանաչված եկամուտ	(646,498)	(196,438)
Տարեվերջի մնացորդ	<u>3,937,456</u>	<u>3,753,054</u>

Տարվա ընթացքում ստացված շնորհները ներառում են՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եվրոպական Միություն	538,809	-
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն	238,155	-
«Ջեյ Էջ Էմ» բարեգործական հիմնադրամ	4,121	928,648
Այլ	49,815	122,662
	<u>830,900</u>	<u>1,051,310</u>

## 12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	59,326	10,801
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	57,905	56,678
Կրեդիտորական պարտքեր պետական այուջեին	39,505	40,864
Ուսանողներից ստացված երաշխիքային վճարներ	26,808	26,501
Այլ կրեդիտորական պարտքեր	13,705	-
	<u>197,249</u>	<u>134,844</u>

Ուսանողներից ստացված երաշխիքային վճարներն իրենցից ներկայացնում են յուրաքանչյուր ուսանողի կողմից վճարված տասը հազարական դրամները, որոնք ենթակա են ետ վերադարձման Խմբի կողմից դասընթացների ավարտից հետո կամ պայմանագրի լուծման ժամանակ: Ներկայումս Խումբը ուսանողներից այնու չի գանձում տաս հազարական դրամներ և նախկինում կնքած պայմանագրերը լուծում է և փոխարենը կնքում նոր պայմանագրեր:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար տես՝ ծանոթագրություն 24-ը:

## 13 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	269,363	207,156
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	1,700,464	1,621,877
Տարվա ընթացքում ճանաչված եկամուտ	(1,810,859)	(1,559,670)
Տարեվերջի մնացորդ	<u>158,968</u>	<u>269,363</u>

Տարվա ընթացքում ստացված շնորհները ներառում են՝

Հազար դրամ

	2019թ.	2018թ.
«Սեմ և Սիլվա Սիմոնյաններ» հիմնադրամ	1,126,195	1,116,585
Եվրոպական Միություն	265,093	23,001
«Ջեյ Էջ Էմ» բարեգործական հիմնադրամ	92,743	107,683
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն	106,469	251,261
ԼՂՀ կառավարություն	59,292	51,503
«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ	30,000	37,000
Այլ	20,672	34,844
	<u>1,700,464</u>	<u>1,621,877</u>

## 14 Այլ հասույթներ

Հազար դրամ

	2019թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
<i>Պայմանագրերից հասույթ</i>		
Ճամբարի կազմակերպումից հասույթ	99,458	62,463
Թունո ծրագրերի իրականացման աջակցումից հասույթ	88,800	145,808
Ապրանքների վաճառքից հասույթ	10,742	98,400
Սրճարանից հասույթ	-	91,880
<i>Այլ հասույթ</i>		
Վարձակալությունից եկամուտ	14,400	3,555
Այլ	4,783	30,286
	<u>218,183</u>	<u>432,392</u>

## 15 Ծրագրային ծախսեր

Հազար դրամ

	2019թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Մատուցված ծառայություններ	85,529	60,153
Հումքի ինքնարժեք	10,143	35,188
Ներկայացուցչական և մարկետինգային ծախսեր	7,990	5,957
Նյութերի դուրսգրում	-	55,870
Այլ	4,037	5,823
	<u>107,699</u>	<u>162,991</u>

## 16 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Ներկայացուցչական և մարկետինգային ծախսեր	120,921	138,117
Ստացված ծառայություններ	84,522	110,502
Հիմնական միջոցների պահպանման ծախսեր	47,200	60,147
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	42,941	55,218
Օգտագործված նյութերի արժեք	35,335	12,441
Սեմինարների մասնակցության վճար	30,307	-
Տրամադրված փոխառությունների և առևտրային դեբիտորական պարտքերի գծով պահուստ	49,797	-
Հեռահաղորդակցման և փոստային ծառայության ծախսեր	20,452	20,057
Հարկեր և տուրքեր	16,537	9,811
Նվիրատվություններ	14,936	25,973
Վարձակալական ծախսեր	12,411	51,870
Խորհրդատվական ծախսեր	10,223	16,905
Այլ	16,913	12,191
	<u>502,495</u>	<u>513,232</u>

## 17 Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տրամադրված փոխառությունների իրական արժեքի ճշգրտում	(20,442)	-
Բանկային վարկերի գծով տոկոսային ծախս	(7,862)	(6,807)
Զուտ ֆինանսական ծախսեր	<u>(28,304)</u>	<u>(6,807)</u>

## 18 Փոխարժեքային տարբերությունից վնաս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(20,696)	(7,777)
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(2,755)	(296)
	<u>(23,451)</u>	<u>(8,073)</u>

## 19 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	16,827	31,295
Հետաձգված հարկ	(5,425)	-
	<u>11,402</u>	<u>31,295</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	501,455		146,842	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%)	100,291	20	29,368	20
(Չհարկվող եկամուտ)/ չվազեցվող ծախսեր, զուտ	(88,889)	(18)	1,927	1
Շահութահարկի գծով ծախս	<u>11,402</u>	<u>2</u>	<u>31,295</u>	<u>21</u>

Խմբի գործունեության ընթացքում անհատույց ստացված ակտիվները «Շահութահարկի մասին» օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում և շահութահարկով չեն հարկվում: Խմբի շահութահարկի գծով ծախսը գոյանում է առևտրային գործունեությունից, մասնավորապես, ճամբարի կազմակերպման ծառայություններից, տույժերից և տուգանքներից, ինչպես նաև այլ առևտրային գործունեությունից:

## 20 Ընդհատված գործառնություններից տարվա օգուտ

Հազար դրամ	2019թ. սեպտեմբերի 3- ին ավարտված ժամանակաշրջան
Մատուցված ծառայություններից և վաճառված ապրանքներից հասույթ	59,136
Մատուցված ծառայությունների և վաճառված ապրանքների ինքնարժեք	<u>(23,086)</u>
	36,050
Վաճառքի, ընդհանուր և վարչական ծախսեր	(23,610)
Հատուցում աշխատակիցներին	(14,184)
Այլ գործառնական ծախսեր	<u>(689)</u>
Գործառնական գործունեությունից վնաս	<u>(2,433)</u>

Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	(35)
Վնաս մինչև հարկերը	(2,468)

Օտարումից օգուտ	31,270
Ընդհատված գործարքներից տարվա օգուտ	28,802

Օտարման ամսաթվին օտարված զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

2019թ.  
սեպտեմբերի 3-ի  
դրությամբ

Ակտիվներ	
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>	
Հիմնական միջոցներ	7,960
Ոչ նյութական ակտիվներ	641
	8,601
<i>Ընթացիկ ակտիվներ</i>	
Պաշարներ	56,042
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	25,013
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7,622
	88,677
Ընդամենը ակտիվներ	97,278
<i>Ոչ ընթացիկ պաշտպանություններ</i>	
Վարկեր և փոխառություններ	63,490
	63,490
<i>Ընթացիկ փոխառություններ</i>	
Երկարաժամկետի վարկի ընթացիկ մաս	32,096
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	32,959
	65,055
Ընդամենը ակտիվներ	(31,267)
Ստացված փոխհատուցում	3
Օտարումից օգուտ	31,270

## 21 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Այս նոր տիպի կորոնավիրուսի բռնկումը առաջացրել է արտասահմանում գործող կամ արտերկրյա ընկերությունների հետ սերտ առևտրային կապեր ունեցող ընկերությունների գործունեության էական խեղաթյուրումներ: Կորոնավիրուսային բռնկման հետ կապված գլոբալ արձագանքը շարունակում է արագորեն ընդլայնվել: COVID-19-ն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեկ ամսով երկրում արտակարգ իրավիճակ հայտարարեց, որը հետագայում երկարաձգվեց մինչև 2021թ. հուլիսի 11-ը:

Հիմնադրամի գործունեության վրա նշանակալի ազդեցությունը կարող է արտահայտվել ծառայությունների մատուցման խափանումների, աշխատակազմի հասանելիության սահմանափակման, եկամուտների նվազեցման, բիզնեսի ընդլայնման պլանների հետաձգման, ինչպես նաև ֆինանսավորում ստանալու անհնարինության տեսքով:

Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս չի գնահատել վերը նկարագրվածի ֆինանսական ազդեցությունը, այնուամենայնիվ, այդ ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

## 22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 22.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճզգրտումների:

#### *Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ*

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

### 22.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### *Ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող ներդրման հաշվառումը*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում Մայր ընկերությունը 2017 թվականի ընթացքում ձեռք է բերել «Շունն ու կատուն» և «Խելագար Սաքո» ընկերությունները: Ղեկավարության համոզմամբ վերոնշյալ գործարքներն իրենցից ձեռնարկատիրական գործունեության միավորում չեն ներկայացնում, քանի որ ձեռքբերված ակտիվներն ու ստանձնած պարտավորությունները չեն կազմում ձեռնարկատիրական գործունեություն, և հետևաբար, գործարքները Խմբի կողմից հաշվառվել են որպես ակտիվների ձեռքբերում՝ կիրառելով ձեռքբերման մեթոդը, սակայն առանց ներդրման օբյեկտի համար ձեռքբերման ելակետային ամսաթվով գույվիլի ճանաչելու:

### Համատեղ գործունեության հաշվառումը

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, Խումբը Հայաստանի Կենտրոնական բանկի հետ համաձայնագիր է կնքել՝ Դիվիզանում «Թումո» կենտրոնների ընդլայնման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու:

Գնահատելիս, թե արդյոք վերոնշյալ համատեղ պայմանավորվածությունը համատեղ գործունեություն է, թե համատեղ ձեռնարկում, կազմակերպությունը կիրառում է դատողություն: Խումբը գնահատում է իր իրավունքներն ու պարտականությունները՝ դիտարկելով պայմանավորվածության կառուցվածքը և իրավական ձևը, պայմանագրային պայմանավորվածությունում կողմերի միջև համաձայնեցված պայմանները, և, երբ տեղին է, այլ փաստեր և հանգամանքներ:

Դատողությունն անհրաժեշտ է նաև որոշելու, թե արդյոք պայմանավորվածությունը համատեղ կառավարում են երկու կողմերը:

Խումբը եզրակացրել է, որ վերոնշյալ պայմանավորվածությունը համատեղ գործունեություն է, հետևաբար ներառվում է ՀՀՄՍ 11-ի շրջանակներում: Հետևաբար, Խումբը ճանաչում է համատեղ գործունեությունում իր մասնակցության հետ կապված բոլոր ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը:

## 23 Ֆինանսական գործիքներ

### 23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության ուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

### 23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

#### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9,504	16,840
Տրամադրված փոխառություններ	39,372	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	622,858	825,143
	<b>671,734</b>	<b>841,983</b>

#### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Վարկեր և փոխառություններ	106,258	123,557
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	117,231	68,404
	<b>223,489</b>	<b>191,961</b>

## 24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

#### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

#### Արտարժույթային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտարժույթով ստացված շնորհներից, բանկային վարկերից և առևտրային դեբիտորական պարտքերից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, ինչպես նաև եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացույցված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

#### Հոդված

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,447	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	25,307	588,047
	<u>31,754</u>	<u>588,047</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,345	-
Վարկեր և փոխառություններ	103,207	-
	<u>104,552</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	<u>(72,798)</u>	<u>588,047</u>

#### Հոդված

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14,109	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	693,787	83,911
	<u>707,896</u>	<u>83,911</u>

*Ֆինանսական պարտավորություններ*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,752	-
Վարկեր և փոխառություններ	114,971	-
	<u>117,723</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	<u>590,173</u>	<u>83,911</u>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
Շահույթ կամ վնաս	7,280	(59,017)	(58,805)	(8,391)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Դեբիտորական պարտքեր	9,504	16,840
Տրամադրված փոխառություններ	39,372	-
Մնացորդներ բանկերում	<u>621,073</u>	<u>822,961</u>
	<u>669,949</u>	<u>839,801</u>

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է հաշիվները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Խումբը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և հաշվետվություններ: Խմբի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար դեբիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Խումբը գրավ չի վերցնում: Բացի այդ Խումբը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար:

### *Առևտրային դեբիտորական պարտքեր*

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից և հաճախորդների աշխարհագրական դիրքից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2019թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող 12 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Խումբը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում հաճախորդների տեղակայման երկրների համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և գործազրկության մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

### *գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինեք մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2019թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		7.04%	
Մինչև 6 ամիս	70,907	9,826	80,733
6 ամսից մինչև 1 տարի	14,631	9,826	24,457
1-5 տարի	34,743	72,134	106,877
Ավելի քան 5 տարի	-	38,431	38,431
	<u>120,281</u>	<u>130,217</u>	<u>250,498</u>

2018թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		7.25%	
Մինչև 6 ամիս	59,824	9,882	69,706
6 ամսից մինչև 1 տարի	11,726	9,882	21,608
1-5 տարի	5,440	79,055	84,495
Ավելի քան 5 տարի	-	53,150	53,150
	<u>76,990</u>	<u>151,969</u>	<u>228,959</u>

Խումբն իրացվելիության դիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

## 25 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

## *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար քաղաքացիական է իրական արժեքը*

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և ստացված փոխառությունները:

Իրական արժեքը որոշվում է՝ համապատասխան դրամական հոսքերը զեղչելով նմանատիպ գործիքների համար կիրառվող շուկայական տոկոսադրույքով: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Վերը նշված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

## 26 Պարտավորվածություններ

### 26.1 Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, Խումբը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հետ կնքած նվիրաբերության պայմանագրի շրջանակներում Գյումրի քաղաքում կրթական և մշակութային կենտրոն ստեղծելու համար պարտավորվել է վերակառուցել հուշարձան շենքը, ինչպես նաև Տավուշի մարզի Կողբ համայնքում նոր Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն հիմնելու նպատակով շինարարական աշխատանքների կապալի պայմանագիր է կնքել «Մեծն Էրիկ» ՍՊԸ, «Էներգովեստ» ՍՊԸ և «Ախուրյանի Կոոպչին» ՍՊԸ հետ՝ համապատասխանաբար 971,219 հազար, 44,027 հազար և 495,533 հազար դրամ ընդհանուր գումարով, որոնց գծով պարտավորվածությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 260,488 հազար դրամ:

## 27 Պայմանականություններ

### 27.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 27.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

### 27.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 28 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Երկարա- ժամկետ վարկեր և փոխառու- թյուններ	Կարճա- ժամկետ վարկեր և փոխառու- թյուններ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	108,275	15,282	123,557
<i>Դրամային հոսքերից</i>			
Մարումներ	-	(11,859)	(11,859)
Տոկոսի մարում	(7,862)	-	(7,862)
<i>Ոչ դրամային հոսքերից</i>			
Տոկոսի հաշվեգրում	7,862	-	7,862
Ընդհատված գործառնություններին վերաբերող փոխառություններ	-	(5,440)	(5,440)
Վերադասակարգում	(17,918)	17,918	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	90,357	15,901	106,258

Հազար դրամ	Երկարա- ժամկետ վարկեր և փոխառու- թյուններ	Կարճա- ժամկետ վարկեր և փոխառու- թյուններ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	91,620	7,043	98,663
<i>Դրամային հոսքերից</i>			
Մարումներ	(9,551)	(107)	(9,658)
Ստացված գումար	31,551	2,795	34,346
Տոկոսի մարում	(6,430)	-	(6,430)
<i>Ոչ դրամային հոսքերից</i>			
Տոկոսի հաշվեգրում	6,807	-	6,807
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(171)	-	(171)
Վերադասակարգում	(5,551)	5,551	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	108,275	15,282	123,559

## 29 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են «Էփիջի Լէբս Էյ-Էմ» ՍՊԸ, «Էփիջի Լէբս Էյ-Էմ» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղը, Խմբի հոգաբարձուների խորհրդի անդամները, որոնք են Սամվել Սայմըն Սիմոնյանը (Խորհրդի նախագահ), Սեվան Նատաշա Սիմոնյանը, Սիլվա Օհանյան Սիմոնյանը և հիմնական ղեկավար անձնակազմը:

### 29.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Գործարքներ</b>		
<i>Հիմնադիր</i>		
Ստացված շնորհներ	1,126,195	1,186,711
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Ստացված ծառայություններ	39,973	39,973
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Աշխատավարձ և պարգևատրումներ	110,115	90,753
<b>Հազար դրամ</b>		
<b>Մնացորդներ</b>	<b>2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>
<i>Հիմնադիր</i>		
Եկամուտներին վերաբերող շնորհներ	-	185,428
Ակտիվներին վերաբերող շնորհներ	317,963	606,206
<i>Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19,846	1,305
<i>Հիմնական ղեկավար անձնակազմ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,155	10,156
Ստացված փոխառություններ	-	5,441

Խմբի գործունեության ապահովման նպատակով «Էփիջի Լէբս Էյ-Էմ» ՍՊԸ ընկերությունը Խմբին անհատույց օգտագործման է տրամադրել 3,965.6 քմ տարածք՝ ք. Երևան, Հալաբյան 16 հասցեում: